

## ԵՐԵՋ ԱՌԱՋԱՐԿ

ԶԵՐԺԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՍՏՈցաշինական  
ՊՐԹՁԱՐԱՆԻ: Մարդիկ, աշխատանքի հոգաբ  
Հայկատներից կախ, շրջապատի նկատմամբ  
անտարբեր, զբաղված են իրենց գործում:  
Թվում է, թե նրանց անձանոթ պիտի լինի  
մտքի թռիչքը, աշխատանքային խիզախումը:  
Բայց այդ միայն թվում է...

Գործարանի ռացիոնալիզատորական բյու-  
րոյում նոր առաջարկություններին ծանոթա-  
նալիս զարմանում ես, թե ինչպես այդ  
պարզ, հասարակ միտքը հենց քո գիտում չի  
ժագել: Այս, պարզ ու հասարակ են այդ  
առաջարկությունները, բայց որքան նյութի  
տնտեսում, աշխատաժամանակի կրճատում  
և որակի բարձրացում է տալիս դրանց ներ-  
դրումը:

ՉՈՒԿՄԱՆ ՑԵԽԻ ՎԱՐԱՔԻ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱ-  
ՅԵԼՅԱՆԻ և տեխնոլոգ Կարպիս ՄՈՒՐԱԴՅԱՆԻ  
ՀԱՅՄԱՏԵՂ առաջարկությունը՝ հաստոցի հե-  
նոցների նոր ձևի կաղապարման տեխնոլո-  
գիայի մասին, գործարանին բերեց մի քանի  
հազար ոռորու եկամուտ:

Իսկ ո՞րն էր նրանց առաջարկության էու-  
թյունը:

Նախկինում հաստոցի մեծ հենոցի կա-  
ղութարման համար պատրաստվում էր հողե 4  
կաղապարածող, որոնք առանձին-առանձին  
տարվում էին շորանոց և շորացվում: Նույնը  
կատարվում էր և փոքր հենոցի հետ, միայն  
այստեղ պետք էին գալիս 2 կաղապարածող  
և աշխատում էին 2 բանվոր: Այդ պրոցեսի  
վրա ծախսվում էր բավականին աշխատաժա-  
մանակ, և արտադրանքն այնքան էլ որակով  
չէր ստացվում: Մ. Միքայելյանի և Կ. Մու-  
րադյանի առաջարկությամբ հենոցների  
կոնստրուկցիան փոխվեց, այսինքն փոխվեց  
հենոցների ներքին ատամնավոր կառուց-  
վածքը, որը կաղապարման համար լուրջ խո-

## ՈՐՔԱՆ Է ՄԵՐ ԿՇԻՌԸ

Գիտե՞ք դուք արդյոք ձեր կշիռը:  
Հենց նո՞ր կշովեցիք: Իսկ որքա՞ն  
կլինի ձեր կշիռը մեկ օր հետո, ե-  
րեկոյան, մի ժամ կամ նույնիսկ 10-  
րոպե հետո:

Մարդու մարմնի կշիռը մշտապես  
տատանվում է: Այդ տատանման  
հասկանալի պատճառներից բացի,  
ինչպիսին է, օրինակ, սնվելը, կան  
նաև ուրիշ, ավելի քիչ նկատելինե-  
րը:

Այդ բանն առաջին անգամ նկա-  
տել է իտալացի գիտնական Սանկ-  
տորիուաց գրեթե 300 տարի առաջ:  
Նա ժամերով բազմում էր իր պատ-  
րաստած հսկայական կշեռքի վրա և  
հետևում սեփական կշռի փոփոխ-  
վելուն: Այդ փորձերի արդյունքե-  
րը այնքան շշմեցուցիչ էին, որ հե-  
տաքրքրությունից այրվող բազմա-  
թիվ հաճախորդներ խոնվում էին նը-  
րա լաբորատորիայում՝ տեմնելու  
համար, թե ինչպես իրենց աչքի ա-  
ռաջ կնիրարի հայտնի գիտնակա-  
նը: Իսկ կշռի փոփոխությունները  
վգալի էին. գիշերվա ընթացքում  
Սանկտորիուսի կշիռը պակասում էր  
գրեթե մեկ կիլոգրամով:

Ո՞րն է այդ փոփոխությունների  
պատճառը:

Ծնչառության ժամանակ օրգա-  
նիզմի մեջ մուտք է գործում թթվա-

ծին: Եթե թթվածնի կլանման հետ միաժամանակ տեղի չունենար ածխաթթու գափի անջատում, ապա մարմնի կշիռը կմեծանար: Իսկ եթե անջատվող ածխաթթվի և կլանվող թթվածնի քանակները հավասար լինեին, ապա կշորի փոփոխություն տեղի չէր ունենա: Բայց ածխաթթու ավելի շատ է անջատվում (ժամում մոտավորապես 3 գրամ), այդ իսկ պատճառով մարմնի կշիռը օրվա ընթացքում պակասում է 75 գրամիվ:

Բացի թթերից, շնչառությունը կատարվում է նաև մաշկի միջոցով, թեև ոչ այնքան ինտենսիվ: Մաշկային շնչառության հետևանքով տեղի ունեցած կշորի կորուստն աննշան է, համենայն դեպքում 10 գրամից չի անցնում:

Ածխաթթվի հետ միասին շնչառության ժամանակ անջատվում են նաև ջրային գոլորշիներ: Դրանց քանակը կախված է թթերի օդափոխության ծավալից և օդի խոնավությունից: Օրական այն կազմում է 150—500 գրամ: Է՛լ ավելի շատ ջուր (օրական 250—1700 գրամ) անջատվում է մաշկի միջոցով: Խոսքը ոչ թե այն բրտնելու մասին է, ոռովնորաբար հասկանում են բըրտնել ասելով, այլ խոնավության դասդադաղ, աննշան անջատման մասին, որի ժամանակ մաշկը մնում է բացարձակ չոր: Մաշկի միջոցով ջրի գոլորշիացումը տեղի է ունենում անընդհատ: Եվ այսպես, միայն թթերի և մաշկի միջոցով ջրի և ածխաթթու գափի կորստի հաշվին օրգանիզմը օրվա ընթացքում կորցնում է 500 գրամից մինչև 2 կիլոգրամ քաշ:

Սա նորմալ պայմաններում: Իսկ

շընդուռ էր հանդիսանում: Զորս կաղապարաձողերը փոխարինվեցին մեկ հողակոճղով: Կաղապարման ձեկի հիմնական փոփոխության հետևանքով նախկինում օրվա ընթացքում ձուղվող 12-ի դիմաց այժմ պատրաստվում է 18—20 մեծ և փոքր հենոց: Այսպիսով, տնտեսվում է մեծ քանակությամբ մետաղ, կորս, էլեկտրաէներգիա, գազ: Կաղապարումը կատարում են 2 բանվոր: Արտաքուստ կարծես հենոցների մեջ ոչինչ չի փոփովել: Բայց համեմատենք հին և նոր կշիռները: Փոքր հենոցը նախկին 97 կգ-ի փոխարին այժմ կշռում է 85 կգ, իսկ մեծը՝ 139 կգ-ի փոխարին՝ 126 կգ: Եթե նկատի ունենանք, որ մեկ տարվա ընթացքում գործարանն արտադրում է հարյուրավոր այդպիսի հաստոցներ, ապա պարզ կլինի գործարանի ստացած ընդհանուր օգուտը:

ԲԱԶՄԱԹԻՎ առաջարկություններ ունի կոնստրուկտոր Նորիկ Վարդանյանը: ԱՀԱ դրանցից մեկը:

Կատարված է փոփոխությունն խառատային հաստոցի տափակապիչի կորպուսի մեջ: Չուման ցեխում ստացվող դետալի կորպուսի անցքը 55 մմ էր և հարկավոր՝ 80 մմ-անոց անցք ստանալու համար ամեն կողմից լրացուցիչ մշակվում էր 12,5 մմ: Դա զրժվարացնում էր ու տամնավոր քերիչների աշխատանքը: Ատամները կոտրվում էին, կորչում էր բավականաշափ մետաղ:

Վարդանյանի առաջարկությամբ դետալի անցքը դարձվեց 60 մմ: Անցքի մեջ բոլոր կողմերից՝ կորպուսի եղբազծի շուրջը թողվածքը դարձավ 5 մմ: Մնում էր լրացուցիչ մշակել դետալի երկու կողմից 5-ական մմ և դետալը պատրաստ է: 12,5-ի փոխարին՝ 5 մմ: Մշակման ընթացքում ատամնավոր գործիքներն այլևս չեն կոտրվում: Տնտեսվում է մեծ քանակությամբ չուցուն:

ԳՈՐԾԱԲԱԽՆԻ ՀԱՍՏՈՑՆԵՐԸ ուղարկվում են ոչ միայն մեր ուսապուրիկայի, այլև Միության և արտասահմանյան այլ քաղաքներ: Այստեղից ստացվում էին բաղմաթիվ շնորհակալական նամակներ, որոնցում, սակայն,

նշվում էր գալվանապատման ցածր որակի մասին:

Իսկապես, արդեն հավաքման ցեխում, ընայած գործադրած բոլոր ջանքերին, ամենափոքր քերվածքը, ներկի մի փոքր շիթը, ացետոնի մի կաթիլն անուղղելիորեն փչացնում էին հաստոցի զանազան մասերի վրա այնքան խնամքով պատրաստված թվատիտակները: Հինգ-վեց օրվա աշխատանք «ջուրն էր ընկնում»: Թվերը ցայտում դարձնելու համար ստիպված էին լինում նորից ներկել, բայց նրանք ստացվում էին անորակ, դժույն, նմանվում նոր կտորին անփորձ ձեռքով կացրած կարկատանների: Ելքը դուավ գալվանապատման ցեխի պետ Բենիկ Առաքելյանը:

Ցուցախտակներ պատրաստելու հին տեխնոլոգիան հայտնի էր իր ճգճգվածությամբ: Մետաղաթերթերը կտրատվում էին, այնուհետև նրանց վրա տպադրվում, փորագրվում էին թվերն ու տառերը, որոնք պատվում էին սպիտակ նիկելով, իսկ մյուս մասերը ներկվում սկզբ: Ներկման պրոցեսը շարունակ ընդհատվում էր չորանոցային ցեխում: Ներկված առանձին մասերը չորացնում էին 120°C-ի տակ, մեկ ժամ տևողությամբ: Պեմզայի և նավթի օգնությամբ աղճատված նիշերը մաքրվում էին, ուստուշվում, պատվում ցապոն լաքով և պատրաստի, չորացված դետալը ուղարկվում էր հավաքման ցեխ: Այստեղ, հավաքման ընթացքում, գալվանապատման ցեխի մի քանի բանի բանվոր զրադշում էր լրացուցիչ ներկումով և փայլեցումով:

Բենիկ Առաքելյանը երկար որոնումներից և անթիվ փորձերից հետո որոշեց կիրառել «սև նիկելապատման» տեխնոլոգիան:

Ո՞րն է սրա առավելությունը:

Թանկարժեք քիմիական նյութերի, էլեկտրաէներգիայի տնտեսում, ինքնարժեքի հշեցում, արտադրողականության բարձրացում և, որ ամենազգայուն է, բարձր որակ:

Հինգ, վեց օրվա փոխարեն ամբողջ պրոցեսը կատարվում է մեկ աշխատանքային

տար կլիմայի դեպքում և ինտենսիվ աշխատանքի ժամանակ կշռի կորուսը ավելի զգալի է դառնում՝ օրվա ընթացքում 10—15 կիլոգրամ, իսկ ժամանակի որոշ հատվածներում 3—4 կիլոգրամ, ընդ որում, անապատային պայմաններում մաշկը գործնականում չոր է մնում:

Եթե փորձենք պատկերացնել, թե որքան քրտինք է արտաթորում տար կլիմայում ապրող մարդն իր կյանքի ընթացքում, ապա կստացվի հիրավի աստղագիտական մի թիվ: Ըստ ամենահամեստ հաշվումների իր կյանքի 70 տարիների ընթացքում մարդն արտապատում է առնվազն 75—150 տոննա քրտինք:

Իսկ ինչ ֆունկցիա է կատարում քրտինքը: Խնչո՞ւ է օրգանիզմն այդպիսի քանակությամբ քրտինք արտազատում: Ջրտնաթորության օգնությամբ մարդը պայքարում է գերտարացման դեմ: Գոլորշիացման վկա մեծ քանակությամբ ջերմություն է ծախսվում: Այսպես, մեկ լիտը քրտինքի գոլորշիացման համար պահանջվում է 600 կալորիա, որը բավական կլիներ մեծահասակ մարդու մարմնի ջերմաստիճանը 10-ով իջեցնելու համար: Ցավոր, պաղեցում տեղի չի ունենում: Քրտնաթորությունը միայն կանխում է մարմնի ջերմաստիճանի բարձրացումը:

Արտազանված քրտինքի ողջ քանակությունը չէ, որ մասնակցում է ջերմակարգավորման պրոցեսին: Գոլորշիացման արագությունը կախված է օդի ջերմաստիճանից, խոնավությունից և շարժման արագությունից: Օգտակար է քրտինքի այն մասը միայն, որն արագ է գոլոր-

շիանում: Խոշոր կաթիլներով արտազատվող քրտինքը, որը հոսում է մարմնի վրայով, օգուտ չի բերում, այդ պատճառով էլ խոնավ կլիմայում քրտնաթորում անօգուտ է:

Հյուսիսիների մոտ քրտնագեղձերն ավելի քիչ են զարգացած, քան հարավիների: Առաջին անգամ լինելով շոգ միջավայրում, հյուսիսիները քրտնում են ոչ այնքան խտենափակ, որքան հարավի կամ շոգին սովոր մարդիկ: Օրինակ, տար ցեխերում աշխատող նոր բանվորները հերթափոխի ընթացքում մի քանի անգամ ավելի քիչ են քրտնում, քան հին բանվորները: Շոգ կլիմային վարժվելու դեպքում տեղի է ունենում քրտնագեղձերի ֆունկցիաների փոփոխություն:

Կլիմայավարժեցման շնորհիվ մարդ այլևս չի քրտնում, այլ արտազատում է այնքան քրտինք, որքան անհրաժեշտ է նորմալ ջերմաստիճանի պահպանման համար:

Այսպիսի մեծ քանակությամբ ջրի կորուստները վնասակար չեն արդյոք օրգանիզմի համար: Մարմնի կշռի 5 %-ին հավասար հեղուկի կորուստից առաջացած ծարավը տանելի է: 7,5 %-ի կորուստը առաջացնում է տանջող ծարավ և մի շարք ուրիշ հիվանդագին սիմպտոմներ, բայց կյանքի համար դեռևս անվտանգ է: Անկասկած, ջրի կորուստը մոտակա ժամերին պետք է լիովին վերականգնվի:

Եվ այսպես, օրվա ընթացքում մարմնի կշռի տատանումները կարող են անցնել մեկուկես տասնյակ կիլոգրամից: Մարմնի իրական կը ռոշումը, ինչպես տեսնում եք, այնքան էլ հասարակ խնդիր չէ:

օրում: Մետաղաթերթը նախապատրաստված լուց հետո անմիջապես նիկելապատվում է, ապա տպագրվում. այնուհետև ծծմբական թթվով (տես, կշռոք՝ 1,64) բաց տեղերից հանում են նիկելը: Էլեկտրոլիտի միջոցով նիկելի հանման այս գործողությունը կատարելուց հետո փորագրությունը շարունակվում է հետեւյալ բաղադրության էլեկտրոլիտի մեջ.

Էրկաթի քլորիդ 75 գ/լ,

Նատրիումի քլոր (կերակրի աղ) 150 գ/լ,  
լարում 8—12 վ,

Հոսանքի ուժ 10 ա/դմ<sup>2</sup>:

Փորագրությունը վերջացնելուց հետո թիթեղն անմիջապես կախվում է «սև նիկելապատման» էլեկտրոլիտի մեջ: Փորագրված մասերը շատ կարճ ժամկետում (30 րոպե) պատվում են սև նիկելով: Էլեկտրոլիտի օգնությամբ վերացվում է տպագրությունից հետո ստեղծված մեկուսացումը, թիթեղը յուղվում է, և թվատախտակն արդեն պատրաստ է: Այն ամրացվում է ոչ միայն ջերժինսկու անվան, այլև կենինականի հղկող հաստոցների և դարբնոցամամլիլային, կուսավանի ներտաշ հաստոցների, Կիրովականի մեքենաշինական, Հոկտեմբերյանի հաստոցաշինական գործարանների թողարկած հաստոցների վրա: Էլեկտրամեքենաշինական և սարքաշինական բոլոր գործարանները կարող են իրենց համապատասխան ցեխերում և կիրառել «սև նիկելապատման» այս նոր տեխնոլոգիան, որը Հայաստանում առաջինն է և բոլորովին վերջերս է ներդրվել երևանի Զերֆինսկու անվան հաստոցաշինական գործարանում:

Գործարանային պայմաններում կատարված այդ նորարարությունը տվել է իր շոշափելի և դրական արդյունքը:

Զ. ԶՈՏԻՒՅԱՆ